ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 108–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դեկտեմբերի 13-ի N /27.3/55764-2022 գրությունը և պետական փորձագիտական եզրակացությունը.

Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 109 –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով. Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական վճարների գծով արտոնությունները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 29 -ի թիվ 109 -Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սահմանել, որ.

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝ երկկողմանի ծնողազուրկ և/կամ հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով առողջությունը խաթարած կամ զոհված անձանց երեխաներ են,

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար, եթե միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ, անապահով, նպաստառու և փախստական ընտանիքի երեխաներ են, ինչպես նաև եթե մեկ ընտանիքից հաճախում է 2 և ավել երեխա 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության արվեստի դպրոցի (արտադպրոցական դաստիարակության հաստատություն) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողներ են սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձինք, ինչպես նաև զուգահեռաբար վճարովի երկու բաժնում և միևնույն ընտանիքից երկու և ավելի բաժնում սովորող աշակերտները, բազմազավակ, անապահով, նպաստառու և փախստական ընտանիքի աշակերտները, ապա ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով.

ա. գործիքային (դաշնամուր, կիթառ) բաժիններում ուսուցման համար՝ ամսական 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

բ. մնացած բաժինների ուսուցման համար ՝ ամսեկան 1750 (մեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքարի ենթակայության մարզադպրոցի ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձանց համար,

5) Եթե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մարզադպրոցի ծառայություններից օգտվողներ են բազմազավակ կամ անապահով ընտանիքի երեխաները, ապա ծառայություններից օգտվողների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով 500 (հինգ հարյուր) դրամ,

6) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կողմից աղբահանության ծառայություններից այն օգտվողների համար, որոնք հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված կամ առողջությունը խաթարած անձանց ընտանիքի անդամներ են կամ 1-ին խմբի հաշմանդամներ են՝ 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

7) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կողմից աղբահանության ծառայություններից օգտվող Նորակերտ, Բաղրամյան, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Արևաշատ, Այգեկ բնակավայրերի բնակիչների համար 2023 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ աղբահանության վճարը սահմանելով 200 դրամ:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը. Փարաքար համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, ծառայությունից օգտվողի ծննդյան վկայականի պատճենը և (կամ) պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 110–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի N 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 4 արձանագրությունը. *Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին տրամադրել 2 739 000 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ
ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ
ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ
ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ